«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ՀԱՆԴԵՍԸ ՏԱՍԸ ՏԱՐԵԿԱՆ Է

Մարտի 20-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Գիտության աշխարհում» հանդեսի 10-ամյակին նվիրված նիստը: Այն իսկապես հոբելյանական էր՝ ջերմ մթնոլորտով, մասնակիցների

բարձր տրամադրությամբ և, որ ամենակարևորն է, ողջույնների սրտառուչ խոսքերով, անկեղծ շնորհավորանքներով:

Բացելով հոբելյանական նիստը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը՝ *շնորհավորեց հանդեսի խմբագրակազմին, արժևորեց հանդեսի դերը և մասնավորապես նշեց. «Այսօրվա գիտությունը ներկայացնելու համար շատ կարևոր է, որ մենք ունենք Հայաստանում եզակի ամսագիր: Վերջին տարիներին գիտության վարկը հայտնի և անհայտ պատճառներով ընկած է: Բարեբախտաբար, մեզ հաջողվում է աստիճանաբար վերականգնել այդ վարկն ու հեղինակությունը, որ մենք ունեցել ենք:*

Գիտության հեղինակության բարձրացման գործում ես շատ եմ կարևորում «Գիտության աշխարհում» հանդեսի դերն ու նշանակությունը»:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ Վաստակագիր հանձնեց ԳԱԱ թղթակից անդամներ Ազատ Նորավյանին, Ալբերտ Կիրակոսյանին *և «Էդիտ-Պրինտ» հրատարակչության տնօրեն* Մկրտիչ Կարապետյանին*:*

Իր շնորհավորական խոսքում, բարձր գնահատելով «Գիտության աշխարհում» հանդեսի բեղմնավոր գործունեությունը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը *«Գիտության աշխարհում» հանդեսի խմբագրակազմին շնորհեց կրթության և գիտության նախարարության «Ոսկե մեդալ»:*

Այնուհետև շնորհավորանքի ջերմ խոսք ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: *Կոմիտեի «Ոսկե մեդալ» շնորհվեց «Գիտության աշխարհում» հանդեսի գործադիր*

տնօրեն Ալբերտ Սարգսյանին, *կոմիտեի պատվոգրերով պարգևատրվեցին հանդեսի պատասխանատու քարտուղար* Նարինե Վարդանյանը, *հանդեսի հումանիտար բաժնի խմբագիր* Ալբերտ Խառատյանը:

Հանդեսի 10-ամյա հոբելյանը ջերմորեն շնորհավորեցին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, *ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ* Աննա Ասատրյանը, *Երևանի ճարտարագիտական համալսարանի ռեկտոր* Հովհաննես Թոքմակջյանը, *Գավառի համալսարանի ռեկտոր* Ռուզաննա Հակոբյանը, *Բյուրականի աստղադիտարանի տնօրեն* Հայկ Հարությունյանը:

Վերջում շնորհակալական խոսք ասաց հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը: *«Գիտություն տարածելը, պրոպագանդելը նույնքան կարևոր նպատակ է, որքան գիտություն տալը: Մեր հանդեսը ունի գիտություն տարածելու խնդիր և այն պատվով է կատարում,– ասաց նա: – Շնորհակալություն ամբողջ խմբագրակազմին, շնորհակալություն մեր ակտիվ ընթերցողներին և բոլոր այն կազմակերպություններին, որոնք բաժանորդագրվում են մեր հանդեսին և օգնում մեզ՝ գիտություն տարածել»:*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ